

13347



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող
Արամ Մեյմարյան
« 04 » 12 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 262 - 24

Նախաձեռնող՝

«ՇԻՆ - ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ

Գեղարքունիքի մարզ, Գավառ բնակավայր 35/33

Գործունեությունը՝

Արարարի մարզի Մասիս համայնքի Նոր Կյուրին
բնակավայրում կրթահամալիրի կառուցում

Նոր Կյուրին բնակավայր

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 262 - 24

« 04 » դեկտեմբեր 2024թ.

Արարատի մարզի Մասիս համայնքի Նոր Կյուրին բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝
Փաստաթղթի տեսակը՝

«ՇԻՆ - ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ
Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն

Գործունեության կատեգորիան՝
Տեղադրման վայրը՝

«Բ» կատեգորիա
Արարատի մազ, Մասիս համայնք
Նոր Կյուրին բնակավայր

Ներածական մաս. «ՇԻՆ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված հաշվետվությամբ նախատեսվում է Նոր Կյուրին բնակավայրի 44 փողոց, 8 հողամաս հասցեում կրթահամալիրի կառուցում:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 8-րդ կետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքն իրենից ներկայացնում է հարթ մակերեսով աննշան թեքությամբ խոտածածկ տարածք, որտեղ ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 873.0 - 874.0 մետրի սահմաններում:

Համաձայն տեխնիկական առաջադրանքի կրթահամալիրը կառուցվելու է բնակավայրի դպրոցի հարակից տարածքում՝ 55 մ հեռավորության վրա: Տարածքը գտնվում է շենք-շինություններից ավելի քան 66 մ հեռավորության վրա:

Հիդրոերկրաբանական տեսակետից նախատեսվող գործունեության տարածքում ստորգետնյա ջրերը գտնվում են 4,0-6,0 մ խորության հորիզոններում:

Գործունեության տարածքում բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքները, պատամամշակութային հուշարձանները, բնության հուշարձանները:

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- ընդհանուր հողատարածքի մակերեսը՝ 0.9537 հա,
- կառուցապատման մակերեսը՝ 2110 մ²,
- բարեկարգման մակերեսը՝ 7427,00 մ², որից
- կանաչապատում՝ 3886 մ²:

Համաձայն նախագծի՝ կրթահամալիրն իրենից ներկայացնում է երեք իրար կապվող մասնաշենք՝ 200 աշակերտի համար նախատեսված երկհարկանի դպրոց և մեկ հարկանի մանկապարտեզ 40 սանի համար: Դպրոցը նախատեսված է 1-ինից մինչև 12-րդ դասարանների ուսումնական ծրագրերի դասընթացների կազմակերպման նպատակով:



Նախագծով նախատեսված են դասասենյակներ, ինֆորմատիկայի կաբինետ, մեթոդ կաբինետ, ռազմագիտության սենյակ, ռոբոտատեխնիկայի սենյակ և ուսուցչանոց, 144 նստատեղով նախատեսված դահլիճ: Դասասենյակները կահավորված են լինելու անհրաժեշտ գույքով և սարքավորումներով: Դպրոցն ապահովված է լինելու բժշկի կաբինետով՝ կահավորված անհրաժեշտ բժշկական կահույքով: Դպրոցի նկուղն ունենալու է 21.6x20.4 մ չափեր, որտեղ նախատեսված է գրադարան, խոհանոց, բուժկետ, պահոցներ, սանհանգույցներ, էլեկտրավահանակ, ջրի ռեզերվուար և պոմպարան: Նկուղային հարկն անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես թաքստոց: Թաքստոցն ապահովված է լինելու հակահրդեհային ավտոմատ համակարգով, սանհանգույցով, լվացարանով: Ստորգետնյա հատվածում թաքստոցի համար նախատեսվում է վթարային ելք:

Մանկապարտեզը նախատեսված է 20 տեղանոց 2 խմբի համար: Խմբերը համալրված են լինելու հանդերձարաններով, ննջարաններով, խմբակային սենյակներով, բուժետներով և սանհանգույցով: Մանկապարտեզում նախատեսված է բժշկի կաբինետ և վարչական սենյակ: Կրթահամալիր ջեռուցումն իրականացվելու է էլեկտրական յուղային ռադիատորների միջոցով:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ կրթահամալիրն ապահովված է լինելու թեքահարթակներով, նախատեսված է հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների սենյակ, սանհանգույց և այլ միջոցառումներ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար: Կրթահամալիրի մուտքը կահավորված է լինելու տարածքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով:

Կրթահամալիրի գլխավոր մուտքի աստիճանների մոտ նախատեսված է հարթակ՝ բացօթյա միջոցառումների համար: Նախատեսվում է բացօթյա մարզադաշտ, վազքուղի: Տանիքը ծածկվելու է մոխրագույն բիտումային կղմինդրով:

Կրթահամալիրի բակում՝ հարավային հատվածում, նախատեսվում է տեղադրել 175 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ՝ կազմված 318 հատ 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներ: Շենքի էլեկտրամատակարարումը և դպրոցի էլեկտրաէներգիայի հաշվառումն իրականացվելու է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ փոխադարձ համաձայնության սկզբունքով՝ դարձափոխիչային էլեկտրոնային երկսակագնային էլեկտրական հաշվիչի միջոցով, եռաֆազ սնուցմամբ: Արևային պանելների տեղադրումն իրականացվելու է համապատասխան սերտիֆիկատ ունեցող ընկերությունների կողմից, որոնց կողմից իրականացվելու է նաև հետագա սպասարկման և շարքից դուրս եկած վահանակների խոտանման աշխատանքները:

Կրթահամալիրի նախագծում հաշվի են առնվել տարածքում առկա ինժեներական բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները՝ ջրամատակարարման, ջրահեռացման, էլեկտրամատակարարման գծերը և միացումներն իրականացվելու են գոյություն ունեցող համակարգերին:

Համաձայն հաշվետվության՝ շինարարական աշխատանքները տևելու են 640 աշխատանքային օր, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ ավտոկռունկ, էքսկավատոր, ավտոինքնաթափ և այլն:

Շինարարական նյութերից օգտագործվելու են երկաթբետոն, երկաթբետոնե կարկասներ, մետաղական կառուցվածքներ, ամրան, ավազ, ապակի, ջերմամեկուսիչ



նյութեր և այլն: Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա: Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնը և շաղախը մատակարարվելու են մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման, տրանսպորտային միջոցների անիվների վրացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Ջրօգտագործումն ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (40 մարդ), կկազմի 771.2 մ³/շին.ժամ: Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 250 մ³: Ջրցանի համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 1052.45 մ³/շին.ժամ:

Կրթահամալիրի կառուցման աշխատանքների ընթացքում կատարվելու է մոտ 6867.7 մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, որից 1105.6 մ³ կօգտագործվի հետլիցքի համար, իսկ ավելացած 5762.1 մ³ հողային զանգվածը կտեղափոխվի Մասիս համայնքի կողմից տրամադրված վայր: Հանվող բուսահողի ծավալը կկազմի մոտ 1907.4 մ³, որը կօգտագործվի կանաչապատման աշխատանքների համար: Բուսահողի հանման նորմերի հաշվարկը, պահման և հետագա օգտագործման աշխատանքները կիրականացվեն Կառավարության 2017թ. նոյեմբերի 2-ի թիվ N 1404 որոշման պահանջներին համաձայն:

Շինարարական աշխատանքների իրականացման փուլում կենցաղային աղբի կուտակման համար տեղադրվելու են 1.5*1 չափերի 2 աղբարկղ: Մոտ 946 8կգ /տարի ծավալով կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարության ընթացքում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարանից: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է ըստ լցվածության, մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է շինարարական հրապարակին կից տեղադրել պլաստմասե պարզարան, որտեղ կուղղորդվեն անձրևաջրերը և անիվների վրացման ջրերը: Պարզարանի պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով տիղմն, ինչն իրենից ներկայացնում է շինտեխնիկայի անիվների վրացումից առաջացած հողի, ավազի և այլ մնացորդային նստվածք, մնացած աղբի հետ կտեղափոխվի աղբավայր:

Կրթահամալիրը կառուցվելու է գործող դպրոցի տարածքում, որտեղ առկա են ինժեներական բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները: Ջրամատակարարման համակարգը միանալու է համայնքային ցանցերին՝ պայմանագրային հիմունքներով: Կենցաղային կոյուղու ցանցը համակցված է: Կառուցվելու է Տոպաս 50 տիպի 9,0 մ³ / օր արտադրողականությամբ մաքրման կայան: Կենսաբանական մաքրման ենթարկված կեղտաջրերը, նվազեցնելով իրենց բակտերիալ աղտոտվածությունը, ստորգետնյա խողովակներով կթափվեն ոռոգման առու:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Կանաչապատման նպատակով տնկվելու են նոր ծառեր՝ 10 հատ հացենի, տուա 46, ինչպես նաև թփերի տեսքով՝ 46 գծմ սամշիտ՝ համաձայն



Մասիսի համայնքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ քանդման, փորման, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման հետ:

Դպրոցի կառուցման շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմացմանն ուղղված մոնիտորինգ, մասնավորապես՝

- համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում,
- բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության, տեխնիկական վերահսկողության իրականացում՝ ամենօրյա ռեժիմով,
- բոլոր աշխատողների աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին իրազեկում,
- տեխնիկական վերահսկողության իրականացում և հայտնաբերված անհամապատասխանությունների մասին իրազեկում,
- շինարարական տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ,
- շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորում և յուղում շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում,
- արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձի նշանակում, ով մշտապես ներկա կգտնվի շինարարական հրապարակում,
- շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանում,
- բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացում՝ ապահովելով կանաչապատ տարածքի համապատասխանությունը կանաչապատման նախագծին,
- կանաչ զանգվածի վիճակի մշտադիտարկում, ծառերի կաչողականության ուսումնասիրություն՝ ծառերի աճն ապահովելու նպատակով:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսված ծախսերը ներառված են շինարարության նախահաշվի մեջ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝

Արարատի մարզի Նոր Կյուրին բնակավայրի կրթահամալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի վրա բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Արարատի մարզպետարանը, Մասիսի համայնքապետարանը, շահագրգիռ հանրությունը:

Փորձաքննական գործընթացում կատարվել է հաշվետվության լրամշակում, որտեղ հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության ընթացքում Արարատի մարզի Նոր Կյուրին բնակավայրում իրականացվել են հանրային լսումներ, ինչի



ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում խստորեն հետևել «Մթնոլորտային օդի պահպանության մասին», «Թափոնների մասին» օրենքների պահանջները, ինչպես նաև գործունեությանն առնչվող շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ՇԻՆ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Մասիս համայնքի Նոր Կյուրին բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Երիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Ռուզան Մակինյան